

**1.2.3. Ձկնորսություն, ձկնաբուծություն**

Հանրապետությունում 2007թ. հունվար-հունիսին, համաձայն ձկնորսությամբ և ձկնաբուծությամբ զբաղվող առևտրային կազմակերպությունների ներկայացրած պետական վիճակագրական հաշվետվությունների տվյալների, իրականացվել է 997.0 մլն. դրամի ձկան որս, որը 2006թ. համապատասխան ժամանակաշրջանի ցուցանիշի նակարդակը գերազանցել է 30.4%-ով (համադրելի գներով):

**Ձկնորսության և ձկնաբուծության ծավալները հանրապետությունում<sup>1</sup>**

	2007թ. հունվար-հունիս		2007թ. հունվար-հունիսը 2006թ. հունվար-հունիսի նկատմամբ, %	2007թ. հունիսը մայիսի նկատմամբ, %
	տոննա	հազ. դրամ		
Կատարվել է որս ձկնորսության, ձկնաբուծության ոլորտում, ընդամենը	655.9	996968.0	130.4	108.6
որից՝ իրացվել է	655.9	996968.0	130.4	108.6

<sup>1</sup> Առանց անհատ ձեռնարկատերերի և տնային տնտեսությունների (ոչ ֆորմալ) գործունեության գնահատման: